Մի՛ սարսափիր դունատ դէմքով,
Շուտ սթափի՛ր, ե՛լ ի վեր։

Կենաց վիճակ կ՚ը մթնանայ,
Բայց լուսնալոյ կայ և յոյս.
Զարթի՛ր, զարթի՛ր իմ Լուսնեակ,
Զարթի՛ր, և ինձ ձօնէ լոյս։

Օրօրներով շատ ննջեցիր,
Ժա՛մ է արդէն զարթնելոյ.
Զարթի՛ր, զարթի՛ր արդ կ՚ձայնեն
Նշխարք քաջաց ի հողոյ։

Զգի՛ր հեռու քեզնից դու նինջ
Դիւցազնի պէս կա՛ց յոտին,
Դրախտն Եդեմ իւր գետերով
Զարթի՛ր ձայնէ ջերմագին։

Շարունակ նինջ վա՛տ է մահից,
Կ՚սիրէ կեանք արթնութիւն. . .
Զարթի՛ր հապա՜ իմ քա՛ջ հոգեակ,
Քանի՞ քնես զօրն ի բուն։

Օրօրողներ թէև անթիւ
Ունեն պատած քո բոլոր,
Բայց մի՛ ննջեր դու խոր քնով,
Թողլով խեղճիս միշտ մոլոր։

Թէ Մարգարէք գուշակեցին
Երկարատև քեզ այդ նինջ,
Կյաջողի ժամանակին
Առնել այդ գիր բնաջինջ։

Թէ կախարդներ սրսկեցին
Ի քեզ փոշի թմրութեան,
Դրախտահոս գետոց սուրբ ջուր
Կըտայ քեզ կեանք արթնութեան։

Ո՛վ դու անմահ երկնից Արքայ,
Իմ դշխոյին տո՛ւր զարթնել,
Քո ԽԱՉ և ՍԷՐ ազատ գրկած
Յառա՜ջ, յառա՜ջ միշտ դիմել։

Յովհաննէս Մուշեղեանց

---

# ԱԶԳԱՅԻՆ

## ՍԱՆԴԽՏԵԱՆ
### ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ
### ՅԱԽԱԼՔԱԼԱՔ

---

Արժ. Ստեփաննոս Աւագ Քահանայ Տէմիրճօղլեանց փետր. 18 ամսաթ. գրութեամբ Ախալքալաքէն կը հաղորդէ մեզ հետևեալը։

„Հաւաստի լինելով, որ Ձեր ազնիւ սրտին շատ ուրախալի է մեր Ազգային յառաջադիմութիւնը, կը փութամ իմ սրտի խոր յարգանաց հետ ծանուցանել Ձեզ, որ մեր փոքրիկ քաղաքի մէջ այս օրերում բացուեցաւ Օրիորդական Ուսումնարան յանուն Սանդխտեան օրիորդական կամ ճիշտ ասել յանուն Սանդխտոյ սրբոյ կուսին, և ակն ունիմք շնորհիւ և խնամօք Նորին Վսեհափառութեան հիմնաւոր և յարատև լեցի շարունակութիւն այնմիկ ուսումնարանի„։

Ուրախ ենք մեծապէս, զի Ախալքալաքնակ մեր սիրելի ազգայինք ևս զգալով իգական սեռի ուսման և դաստիարակութեան անհրաժեշտ կարևորութիւնը՝ բացած են օրիորդաց դպրոց։

Խիստ մեծ կարօտութիւն ունի մեր ազգը կրկին սեռի դաստիարակութեան և լուսաւորութեան համար ամեն ջանք և միջոց ի գործ դնելու շտապել. և հարկ է գիտենալ, որ առանց իգական սեռի բարւոք կրթութեան և զարգացման՝ արականը այնքան արդիւնաւոր և օգտաւէտ

հանդիսանալ կարող չէ. ուստի պարտիմք գէթ հաւասարապէս հոգալ իգական սեռի համար իսկ. և ահա յայնժամ ճշմարիտ յառաջադիմութեան ժամանելու բուն և ուղիղ շաւիղը ձեռք առած կը գտնուիմք:

Արդ խորին շնորհակալութեամբ հրապարակաւ կը գովեմք Ախալքալակաբնակ ազգայնոցս նոր ձեռնարկը, և կը բարեմաղթեմք կատարեալ յաջողութիւն և յարատև արդիւնաւորութիւն նորահաստատ դպրոցին յօգուտ և ի յառաջադիմութիւն Եկեղեցւոյ և Ազգի մերոյ:

## ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

### Ի ԹԷՈԴՈՍԻԱ

Վսեմ. Պաշտօնեայն ներքին գործոց գրութեամբ իւրով յայտնեց Վսեհ. Կաթողիկոսի ազգիս, զի Օգոստ. Կայսրն ամենայն Ռուսաց բարեհաճեցաւ հրամայել ի Թէոդոսիա եղեալ Խալիպեան ուսումնարանը դարձուցանել ի Հոգևոր ուսումնարան Ն.—Նախիջև. և Պասարապիոյ թեմին Հայոց համար, միանգամայն յանձնելով զայն և զապարանն հանդերձ ամենայն կահիւքն և պարագայիւք ի Տեսչութիւն Հոգևոր իշխանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ:

## ՆՈՒԷՐ

Աստուածասէր Պ. Մ. Թևան Հախնազարեանց Ագուլեցի նուիրեց հարիւր ռուբլի յօգուտ տպարանի մերում ի ձեռն Գանձապետի Մայր Աթոռոյս ի կողմանս Գողթնեաց Տոհմ. պատուաւոր քաղաքացի Մեծ. Հայրապետի Երասխանեանց, խնդրելով ի փոխարէն՝ տպել Կանոն Պատարագիչ Քահանայից զգեստաւորելոյ՝ և մէն մի օրինակ ընծայել Եկեղեցեաց Հայոց Ռուսաստանի ի յիշատակ իւր և համայն կենդանեացն և ննջեցելոց:

Հրապարակական շնորհակալութեամբ կը գովեմք վերյիշեալ անձի հոգեսէր բարեգործութիւնը, և կը յուսամք միանգամայն այլոց բարի օրինակ ազդել:

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ

(Շ—ր—ն—կ—թ—ն.)

### ՅԱՍՏՐԱԽԱՆ

| | |
|---|---|
| Եղբարք Ստեփաննոս և Սիմէօն Մարտիրոսեան Պօպովեանք | 10 |
| Կատարինէ և Եղիսաբէթ Թութունովեանց | 2 |
| Համբարձում Գասպարեան Համբարձումեանց | 2 |
| Ծաղիկ Յովհաննէս Իվանովեան | 2 |
| Այրի Ծաղիկ Մազանդարանցեանց | 2 |
| Այրի Մարգարիտ Մովսէսեան Պօպովեանց | 10 |
| Այրի Եղիսաբէթ Գալուստեան Մարտիրոսեանց | 5 |
| Ստեփան Բախրովեանց | 2 |
| Արտեմ Սարօքնիկեանց | 2 |
| Յարութիւն Բախրեանց | 2 |
| Յարութիւն Բաբալեանց | 2 |
| Համբարձում Մազանդարանցեանց | 2 |
| Աւետիս Բախրեան | 2 |
| Սարգիս Խօճայեանց | 5 |
| Մատթէոս Սվէշնիկեան | 5 |
| Մարկոս Սօթէլնիկեան | 2 |
| Յովհաննէս Դաւթեան Կամիշեանց | 3 |
| Մատթէոս Մովսէսեան Վլասեանց | 3 |
| Ծերուն Կարապետեան | 2 |
| Անձինք հինգ | 5 |